



ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆԱԽ ԵՐԱՆԻՅ ԱՌԱՋ,  
 ԵՎ ԴԱՐԵ՛Ր ԱՌԱՋ:  
 ՄԵՆՔ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՅՍ ԷԻՆՔ  
 ՏԱԼԻՍ՝  
 ԲԵՂՈՒՆ ԴԱՇՏԵՐԻՆ ԳԵՐԱԴԱՍԵԼՈՎ  
 ԼԵՌՆԵՐԸ ՔԱՐՈՏ.  
 ԻՍԿ ՄԵՁ ՈՏՆԿՈՒ ՇԵՏԱՊԵՆԴՈՂԻՆ  
 ԴԻՏԱՊԱՍՏ ԱՆՈՒՄ  
 ԵՎ ԴԵՐԱՆՈՎ ԻՍԿ ԱՆՈՒՆ ՍՏԱՆՈՒՄ՝  
 ԿՈՉԵԼՈՎ ՄԵՁ ՀԱՅԿ:  
 ՄԵՆՔ ԱՆՇՈՒՆՉ ՔԱՐԸ ԴԱՐՁՆՈՒՄ ԷԻՆՔ  
 ՉՈՒԿ,  
 ՉՈ՛ՒԿ,  
 ՈՐ ԱՆՁՐԴԻ ԼԵՌՆԱԼԱՆՁԵՐԻ ՇԻԿԱՅԱԾ  
 ՀՈՂԻՑ  
 ԻՐ ՓՈՐԸ ՎԱՌԱԾ՝  
 ԿԻՍԱԲԱՅ ԲԵՐՆՈՎ  
 ԵՐԿԸՆՔԻՑ ԱՆՁՈՒՐ  
 ԳՈՆԵ ԱՆՁՐԽԻ ՇԻԹ ԷՐ ՊԱՀԱՆՁՈՒՄ:  
 ԼԵՌԸ ԾԱԿԵԼՈՎ՝  
 ՄԵՆՔ ՆՐԱ ՄԻՋՈՎ ՋՈՒՐ ԷԻՆՔ ՏԱՆՈՒՄ  
 ՈՒ ՇՌԱՅԼ ԲԱՆՈՒՄ  
 ՄԵՐ ԱՅԳԻՆԵՐԻ ԱՅՐԻ ԱՐԳԱՆԴԻՆ:  
 ԻՍԿ ԱՍՈՒԼ ԿԱՎԻՆ ՏԱԼԻՍ ԷԻՆՔ ՄԵՆՔ  
 ՉԽԸ ՎԱՐՄԱՆԴԻ  
 ԵՎ ԿՈՉՈՒՄ ԿԱՐԱՍ,  
 ՈՐԻ ՄԵՁ ՇԵՏՈ ԼՈՂԱՅՆՈՒՄ ԷԻՆՔ  
 ԳԱՐԻՆ ՄԵՐ ՄԱՔՈՒՐ,  
 ԵՎ ՄԿԸՐՏՈՒԹՅԱՆ ԱՅՐ ՋՈՒՐԸ ԴԵՂԻՆ  
 ՀԱՐԲԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՆՈՒՅՆԻՍԿ  
 ԱՌԱՎԵԼ  
 ՋԱՐՄԱՆՔ ԷՐ ԱՁԴՈՒՄ ԱՅՆ  
 ԳՈՌՈՋՆԵՐԻՆ,  
 ՈՐ ՄԵՁ ԱՅՆՈՒՇԵՏ  
 ՉԷԻՆ ՀԱՆԴԸԳՆՈՒՄ ԿՈՉԵԼ  
 «ԲԱՐԲԱՐՈՍ»:  
 ՄԵՆՔ ՀԱՄԱՌ ՈՍԿՈՒՆ ՍՏԻՊՈՒՄ ԷԻՆՔ  
 ՆԱԽ ՄԱՅՐԱՆԱԼ՝

ԴԱՌՆԱԼ ԴԻՅՈՒՀՈՒ ԱՐՁԱՆ ԱՆԹԵՐԻ,  
 ԵՎ ԱՅՐ ՀԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ  
 ՈՍԿՈՒ  
 ԱՆՎԱՆՈՒՄ ԷԻՆՔ ՄԱՅՐ  
 ՋԳԱՍՏՈՒԹՅԱՆՑ՝ ՄԵԾԸՆ ԱՆԱՀԻՏ:  
 ՄԵՆՔ ՏԱԼԻՍ ԷԻՆՔ ԱՆՀԱՏԱԿ ՎԻՇԻՆ ՄԻ  
 ՆՈՐ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ,  
 ԵՐԿՆԱՍՈՒԽ ԿԻՐՃԻՆ՝ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ  
 ՄԻ ՆՈՐ  
 ԵՎ... ԿՈՉՈՒՄ ԳԱՌՆԻ...  
 ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆԱԽ ԵՐԱՆԻՅ ԱՌԱՋ:  
 ՄԵՐ ԱՐՔԱՆԵՐԻ և ԻՇԽԱՆԵՐԻ ԱՐԱԾԻ  
 ՎՐԱ ՉԱՐԱԾԸ ԴՐԱԾ՝  
 ՆՐԱՆՑ ԳՈՐԾՆ ԷԻՆՔ ԴԵՌ  
 ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ  
 ԼԱՐԵՐԻ ՎՐԱ ԲԱՍԲ ԲԱՍԲԻՌՆԵՐԻ  
 ԵՎ... ԴԱ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՐԳ  
 ՎԻՊԱՍԱՆԱՅ...  
 ԱՐՇԱԿՆԵՐԸ ՄԵՐ՝  
 ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՈՏՔՈՎ ՇՓՎԵԼՈՎ,  
 ԼՈՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐՈՎ ԷԻՆ  
 ՇՈՒՐԹԵՐԸ ԲԱՆՈՒՄ  
 ԵՎ ԸՄԲԵՐԱՆՈՒՄ ՏԻՐԱԿԱԼՆԵՐԻՆ:  
 ՄՈՒՇԵՂՆԵՐԸ ՄԵՐ՝  
 ՕՏԱՐ ՋՈՐՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԴԻՄԱՆԱԼԻՍ  
 ՆՐԱՆՑ ՀԱՐԵՍԸ ԳԵՐԻ ԱՌՆԵԼՈՎ  
 ՈՒ ՁԵՌՔ ՉՏԱԼՈՎ և ՈՉ ՄԻ ԿՆՈՋ՝  
 ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՎԵՀԱՆՁՆՈՒԹՅԱՆ  
 ԴԱՍ ԷԻՆ ՏԱԼԻՍ,  
 ԱՅՆՊԻՄԻ՝ ՄԻ ԴԱՍ,  
 ՈՐ ՈՍՈՒՆ ԱՆԳԱՄ ԱՆԳԻՐ ԷՐ ԱՆՈՒՄ...  
 ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆԱԽ ԵՐԱՆԻՅ ԱՌԱՋ:  
 ՄԵՆՔ ԱՍՏՂԵՐՆ ԷԻՆՔ ՄԵՐ ԱՉՔՈՎ  
 ՋՆՆՈՒՄ,  
 ԱՐՓԱԼՈՒՅՍ ԷԻՆՔ ԹԵԼԵՐՈՎ ՀԻՆՈՒՄ,  
 ՏԱՃԱՐԻՑ ԵԼՆՈՒՄ ՈՒ ԹԱՏՐՈՆ ԳՆՈՒՄ,  
 ՎԱՅԵԼՈՒՄ ՆԱԽ ՀԱՃՈՒՅՔԸ ՎՍԵՄ  
 ՄԵՐ ԱՅՆ ՊԱՐՈՒՀԻ-ԿԱՔԱՎՈՂՆԵՐԻ,  
 ՈՐՈՆՑ ՄԱՐՄԻՆԸ ՆՎԱԳ ԷՐ ԼՌԱԾ  
 ԵՎ ՈՐՈՆՔ ՆԱԽ «ԵՐԳԵԻՆ ՁԵՌԱՄԲ»...  
 ԱՅՈ՛Վ, ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆԱԽ ԵՐԱՆԻՑ  
 ԱՌԱՋ:  
 ՄԱԿԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՅՆՔԻ ՎՐԱՅՈՎ  
 ՄԻ ՉՏԵՍՆԸՎԱԾ ՄՐՐԻԿ ԷՐ ԱՆՑԵԼ:  
 ՀՐԵԱ ՄԻ ԳՈՒՆԱՏ՝  
 ՔՇՎԱԾ ԻՐ ԵՐԿՐԻՑ,  
 ՕՏԱՐԱԿԱՆԻ ՈՒ ՀՅՈՒՐԻ ՏԵՍՔՈՎ,  
 ԻՆՔՆ ԻՐԵՆ ՏԱՐԱՎ ԱՇԽԱՐՀԻՑ ԱՇԽԱՐՀ:  
 ՋՈՐԱՎՈՐ ԷԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ,

ԱՅՆՔԱՆ ԶՈՐԱՎՈՐ,  
 ՈՐ ԱՆԿԵՂԾ ԷՒՆ ՈՒ ՉԷՒՆ ՍՏՈՒՄ:  
 ԻՍԿ ԽԵՂՃ ՈՒ ԱՂՔԱՏ ԱՅՂ ԵՔՐԱՅԵՑԻՆ  
 ԵԿԱՎ ՇԱՂ ՏԱԼՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ  
 ՕՂՈՒՄ,  
 ԵԿԱՎ ԶԻՆԱՎԱՌ ԳԵՂԵՑԻԿ ՍՏՈՎ...  
 ՄԻԱՄԻՏ ԷՒՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ,  
 ՄԻԱՄԻՏ ԱՅՆՔԱ՛Ն,  
 ՈՐ ԾԱՐԱՎՆ ԻՐԵՆՑ ՀԱԳԵՅՆՈՒՄ ԷՒՆ  
 ԼՈԿ ԱՐՅԱՄԲ ԶՈՀԻ  
 ԵՎ ԻՐԵՆՑ ՔԱՂՅԸ՝ ՆՈՒՅՆ ԶՈՀԻ ՄՍՈՎ:  
 ԻՍԿ ԵՔՐԱՅԵՑԻՆ ԵԿԱՎ ԱՍԵԼՈՒ.  
 «ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆՆ ԻՄ. ԱՌԵՔ ՈՒ ԿԵՐԵՔ:  
 ԱՅՍ Է ԱՐՅՈՒՆՆ ԻՄ. ԸՄՊԵՑԵՔ  
 ՄԻՐՈՎ»...  
 ՈՒՂՂԱՄԻՏ ԷՒՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ,  
 ՈՒՂՂԱՄԻՏ ԷՒՆ՝  
 ՊԱՐԶ ԴԵՐՁԱԿԻ ՊԵՍ.  
 ԻՐԵՆՑ ՀԱՎԱՏԻ ՀԱՆԴԵՐԶԸ ՆՐԱՆՔ  
 ՄԻՇՏ ՁԵՆՈՒՄ ԷՒՆ ՃԻՇՏ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ:  
 ԻՍԿ ԵՔՐԱՅԵՑԻՆ ԵԿԱՎ ԿԱՐԵԼՈՒ  
 ՄԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ-ԿԱԽԱՐԴԻԶ  
 ՀԱՆԴԵՐԶ,  
 ՈՐՈՎ ՊԻՏԻ ՈՐ ՀԱՎԱՍՍԱՐՎԵՒՆ  
 Ե՛Վ ՎՏԻՏ ՈՒ ԳԵՐ,  
 Ե՛Վ ՀԱՍՏ ՈՒ ԲԱՐԱԿ...  
 ՃՇՏԱԽՈՍ ԷՒՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ,  
 ՃՇՏԱԽՈՍ ԷՒՆ՝  
 ԵՐԵԽԱՅԻ ՊԵՍ.  
 ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՐԴ ԷՒՆ ՆՐԱՆՔ  
 ԱՆՎԱՆՈՒՄ,  
 ԻՍԿ ԻՐԵՆՑ՝ ԱՍՏՎԱԾ:  
 ԻՍԿ ԵՔՐԱՅԵՑԻՆ ԱՍՍՅ. «ՄԱՐԴ ԵՄ ԵՍ»,  
 ԵՎ... ԴԱՐՁԱՎ ԱՍՏՎԱԾ՝  
 «ՄԱՐԴ ԵՄ» ԱՍԵԼՈՎ...  
 ...ԶՈՐԱՎՈՐ ԷՒՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ,  
 ԱՅՆՔԱ՛Ն ԶՈՐԱՎՈՐ,  
 ՈՐ ԱՆԿԵՂԾ ԷՒՆ ՈՒ ՉԷՒՆ ՍՏՈՒՄ:



ԻՍԿ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԿԱՆ  
 ԺԱՄԱՆԱԿՆԵՐ,  
 ԵՐԲ ՈՎ ՉԻ՛ ՍՏՈՒՄ՝ ՊԻՏԻ ԿՈՐԾԱՆՎԻ՛...  
 ԵՎ ԿՈՐԾԱՆՎԵՑԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԻՆ:  
 ՄԱՐԴԻԿ,  
 ՈՐ ԵՐԵԿ ՈՒՆԵՒՆ ՏԱՐՔԵՐ ԱՍՏՎԱԾՆԵՐ  
 ԲԱԶՈՒՄ,  
 ՊԱՐՏԱՎՈՐ ԷՒՆ ՀԻՄԱ ՈՒՆԵՆԱԼ  
 ՄԻԱՅՆ ՄԻ՛ ԱՍՏՎԱԾ,  
 ԲՈԼՈ՛ՐԸ՝ ԼՈԿ ՄԻ՛, ՄԻԱՅՆ ՄԻ՛ ԱՍՏՎԱԾ:  
 ԵՎ ՉԳԻՏԵՒՆ,  
 ԹԵ Ո՛Վ Է ԱՅՂ ՄԻՆ  
 ԵՎ Ի՛ՆՉ Է ՈՒԶՈՒՄ...  
 ԱՐԱՄԱԶԴՆԵՐԻ, ՄԻՀՐԵՐԻ ՏԵՂԱԿ,  
 ԲՈՅՔԵՂ-ԲՈՅՄՈՐՈՒՔ ՇԵԿ ՎԱՀԱԳՆԵՐԻՆ  
 ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ  
 ԵԿԱՎ ՄԻ ՀՐԵԱ ՍԵՄՈՐՈՒՔ-ՍԵՔԵՂ,  
 ԵՎ ԱՍՏՂԻԿՆԵՐԻ, ԱՆԱՀԻՏՆԵՐԻ ՈՒ  
 ՆԱՆԵՆԵՐԻ  
 ԵՐԵԿՎԱ ՏԵՂՈՒՄ ԱՅՍՕՐ ՀԱՍՏԱՏԵՑ  
 ԻՐ ՄՈՐԸ ԴԱԼՈ՛ՒԿ, ԹԵ՛ ՍՄՈԹԱՀԱՐ:  
 ԵՎ ԽՈՍՈՒՄ ԷՒՆ ՆՐԱՆՔ ՄԻ ԼԵԶՎՈՎ,  
 ՈՐ ՉԷ՛Ր ՀԱՍԿԱՑՎՈՒՄ:  
 ՄԵՀՅԱՆՆԵՐԻ ՏԵՂ ՈՒ ԲԱԳԻՆՆԵՐԻ,

ՆՐԱՆՑ ԴԵՌ ՏԱՔ-ՏԱՔ ՄՈՒԽԻՐԻ ՎՐԱ,  
ՀԱՍՍԿ ՆԵՏԵՑԻՆ

ԴԵՌԿԸՍ ԱՆԾԵՓ Ե ՓԱՅՏԱԿՏՈՒՐ  
ԱՂՈԹԱՏԵՂԻՔ՝  
ԻՐԵՆՑ ԽԱՉԵՐԸ ՍՈՒՐ ՄԽՐՃԵԼՈՎ  
ՆԱԽ՝ ՄՐՏԵՐԻ՝ ՄԵՁ,  
ԱՊԱ՝ ԵՐԿԸՆՔԻ՝...  
ԱՏՐՈՒՇԱՆՆԵՐԻ ԽՈՒՐՁ-ԽՈՒՐՁ ԲՈՅԵՐԻ  
ԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՂ  
ԿԵՆՏ-ԿԵՆՏ ՀԱՍԿԵՐԻ ՉՈՐ  
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՄԲ  
ՊԱՂ-ՊԱՂ ՄՈՍԵՐՆ ԵՆ ՈՒՋՈՒՄ ԴԱՌՆԱԼ  
ՀԱՅ ՄԻ ՆՈՐ ՀԱՎԱՏԻ,  
ՈՐ ԻՐԵՆ ԿՈՉՈՒՄ ԿԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,  
ԲԱՅՑ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԲՌՆՈՒԹՅԱՄԲ  
ԱՆՔՈՂ...  
...ԱՌԱՆՑ ՀԱՎԱՏԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԴՅՈՒՐԻՆ  
ՉԷ ՆՈՒՅՆԻՄԿ ՄԵՌՆԵԼԸ,  
ԻՍԿ ԱՊՐԵԼՆ... ԱՐԴԵՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է:

ՄԱՐԴՈՒՑ ԽԼԵՑԻՆ ԻՐ ՀԱՎԱՏԸ ՀԻՆ,  
ԻՍԿ ՀԱՎԱՏԸ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՎԵՑ  
ԽՈՍՔՈՎ՝,  
ՄԻՄԻԱՅՆ ԽՈՍՔՈՎ.  
-ԴԵՌ ՆՈՐԸ ՉԿԱՐ՝:  
ԱՎԵՐՎԵՑ ՀԻՆԸ ՈՒ ՓԼԱՏԱԿՎԵՑ,  
ԻՍԿ ՆՈՐԸ ՄԻԱՅՆ ԿԱՌՈՒՑՎԵՑ  
ԽՈՍՔՈՎ՝,  
ՄԻՄԻԱՅՆ ԽՈՍՔՈՎ.  
-ԴԵՌ ՆՈՐԸ ՉԿԱՐ՝:  
ԵՎ ԱՅՄՊԵՍ՝  
ՀԱՆԿԱՐԾ ՈՒ ԴԱՆԴԱՂՈՐԵՆ  
ԱՄԵ՛Ն ԻՆՉ ՇՐՋՎԵՑ,  
ՏԱԿՆ Ի ՎԵՐ ԵՂԱՎ,  
ԵՎ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՈՉ ՈՔ.  
-ԻՆՔԸ ՇՐՋՈՂՆ ԻՍԿ ՉԷ՛Ր ԿԱՐՈՂ ԷԼ, ՉԷ՛:  
ԵՎ ԱՅՄՊԵՍ՝  
ԿՅԱՆՔԻՑ ՄՆԱՅ ՄԻ «ՄԵՂԱ»,  
ՈՐ ՊԻՏԻ ՆԱԿ... ԲԱՐՁՐԸ ՉՀՆՉԵՐ:



ԵՎ ԱՅՄՊԵՍ՝  
ԱՆՑԱՎ ՈՂՋ ՀԱՐՅՈ՛ՒՐ ՏԱՐԻ,  
ՈՐ ԿԱՐՃ Է ԹՎՈՒՄ, ԵՐԲ ԳԻՐՔ ԵՍ  
ԿԱՐԴՈՒՄ,  
ԻՍԿ ԵՐԲ ԱՊՐՈՒՄ ԵՍ Ե ԱՄԵՆ ԸՈՊԵ  
ՋԳՈՒՄ ԵՍ ՄԱՇԿԻ՛Ղ, ՋԳՈՒՄ ԵՍ  
ՄՐՏՈ՛Վ,  
ՈՒՂԵՂԻԴ ԲՈԼՈ՛Ր ԾԱԼՔԵՐՈՎ՝  
\_\_\_\_\_ ԱՅՆԺԱՄ...  
ՀԵՆՑ ԱՅՄՊԵՍ ԷԻՆՔ ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ  
ԱՅՆԺԱՄ:  
ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՉՎԱԾ ԱՇԽԱՐՀՆ ԷԼ  
ԱՐԴԵՆ  
ԼՈԿ ԱՆՈՒՆՈՎ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԿՈՉՎՈՒՄ:  
ՋՈՀՎԱԾ ԱՐՋԱՌԻ ՏԱՔՈՒԿ ՄՐՏԻ ՊԵՍ  
ՄԵՐ ՀՈՂՆ ԷՐ ԿԻՍՎԱԾ  
ՈՒ ԲՈՆԻ ՔԱՇՎԱԾ  
ԵՐԿՈՒ ՇԻԿԱՅԱԾ ՈՒ ՍՈՒՐ ՇԱՄՓՈՒՐԻ,  
ՈՐՈՆՑԻՑ ՄԵԿԸ ՊԱՐՄԻԿՆ ԷՐ ԲՌՆԵԼ  
ԿՐԱԿԻ ՎՐԱ,  
ՄՅՈՒՍԸ ԲՌՆԵԼ ԷՐ ՄՈՍԵՐԻ ՎՐԱ ՆԵՆԳ  
ԲՅՈՒՋԱՆԴԱՅԻՆ:  
ԽՈՐՈՎՎՈՒՄ ԷԻՆՔ:  
ԱՐՅՈՒՆՔԻ ՏԵՂԱԿ  
ՄԵՐ ՃԵՆՃԵՐՆ ԷԻՆ ԿԱԹՈՒՄ-  
ԿԱԹԿՈՒՄ,



ԱՍԵՍ ԿԱՍԵՆՈՒՄ ԻՐԵՆՅ ԽՈՐՈՎՈՂ  
 ԿՐԱԿԸ ՄԱՐԵԼ:  
 ՄԱԿԱՅՆ ՃԵՆՃԵՐԻՅ - ԱՅԴ Ո՞Վ ՉԳԻՏԻ -  
 ՉԻ՛ ՄԱՐՈՒՄ ԿՐԱԿ,  
 ԱՅԼ ԲՈՐԲՈՔՎՈՒՄ Է ՄՈԼՈՒԹՅԱՄԲ ՄԻ  
 ՆՈՐ:  
 ՄԵ՛Ր ՀՈՂԻ ՎՐԱ,  
 ՄԵ՛Ր ԵՐԿԸՆՔԻ ՏԱԿ  
 ՄԵՆՔ ԴԱՐՁԵԼ ԷԻՆՔ ՕՏԱՐԻ ԳԱՂՈՒԹ:  
 ՆՈՒՅՆԻՄԿ ՄԵՐ ՀՈՐԸ ԵՐԿԸՐՊԱԳԵԼՈՒ  
 ԵՎ ԿԱՄ ԹԵ ՈՐԴՈՒՆ ՊԱԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
 ԱՅԼ ԱՐՔՈՒՆԻՔԻՅ ՊԻՏԻ ԽՆԴՐԵԻՆՔ ՄԻ  
 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ,  
 ՈՐ ԵԹԵ ՀԱՍՆԵՐ՝  
 ՊԱՐՏԱՎՈՐ ԷԻՆՔ ՀԱՄԱՐԵԼ ՇՆՈՐՀ  
 ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼ ՄՆԱԼ ՀԱՎԻՏՅԱՆ:  
 ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՉՎԱԾ ԱՇԽԱՐՀԸ ԿԻՍՎԱԾ  
 ՆՍՏԵԼ ԷՐ ԱՐԴԵՆ  
 ԻՐԱՐ ՉԿՊԱԾ ԾԱՅՐԵՐԻ ՎՐԱ Ա՛ՅՆ  
 ԱԹՈՌՆԵՐԻ,  
 ՈՐՈՆՅ ՏԱԿ ԱՆՏԱԿ ԱՆԴՈՒՆԴՆ ԷՐ  
 ԲԱՅՎՈՒՄ:  
 ԻՄԿ ՄԵՐ ՄԱՐՄՆԱՎՈՐ ՏԵՐԵՐԸ ԲՈԼՈՐ  
 ՈՒՆԵԻՆ ԼՈԿ ՄԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ,  
 ԼՈԿ ՄԻ ԽՈՀ ԲԱՐՁՐԸ՝  
 ԻՐԵՆՅ ԱԹՈ՛ՌԸ,  
 ԳԱՀՈ՛ՒՅՔԸ ԻՐԵՆՅ  
 ԵՎ ԻՐԵՆՅ ԲԱ՛ՐՁԸ:  
 ՄԻԱ՛ՅՆ ՉՁՐԿՎԵԼ ԻՐԵՆՅ ՎԵՐԱԴԱՍ  
 ՏԻՐՈՋ ՇՆՈՐՀԻՅ,-  
 ՋՍՊԱՆԱԿԻ ՊԵՍ  
 ԱՅՍ ՄԻՏՔՆ ԷՐ ՆՐԱՆՅ ՎԵՐ ՈՒ ՎԱՐ  
 ՃՈՃՈՒՄ:  
 ՄԻԱ՛ՅՆ ԹԵ ԿԱՌՉԵԼ ՈՒ ՆՍՏԱԾ ՄՆԱԼ  
 ԻՐԱՐ ՉԿՊԱԾ ԾԱՅՐԵՐԻ ՎՐԱ Ա՛ՅՆ  
 ԱԹՈՌՆԵՐԻ,  
 ՈՐՈՆՅ ՏԱԿ ԱՆՏԱԿ ՎԻՀՆ ԷՐ ՈՐՈՃՈՒՄ...  
 ԱՎԵՐԱԿՎԵԼ ԷՐ ԵՐԿԻՐԸ ՀԱՅՈՑ:  
 ՈՒ ԵԹԵ ՆՐԱ ՏԵՐԵՐԸ ՏԱՆՈՒ  
 ԳԵԹ ՈՒՆԵՆԱՅԻՆ ԱԶՆԸՎՈՒԹՅՈՒՆԸ  
 ԻՐԵՆՅ ՆԱԽՈՐԴԻ՛  
 ՆՐԱ ՊԵՍ ՊԻՏԻ ՄՌՌԱՅԻՆ ՆՈՐԵՆ.



«ԱՎԵՐԱԿԱՅԸՍ Ո՞ՒՄ ԹԱԳԱՎՈՐԵՍ»...  
 ՔԱԶԵՐԻ ՄԱՀՄԱՆՆ ԻՐԵՆՅ ԶԵՆՔՆ Է  
 ՀԵՆՅ:


ՔԱԶԵՐ ՄԻ՛ՇՏ ԷԼ ԿԱՆ,  
 ԶԵ՛ՆՔ Է ՀԱՐԿԱՎՈՐ:  
 ՔԱԶԵՐ ՄԻ՛ՇՏ ԷԼ ԿԱՆ,  
 ՊԵՏՔ Է ԱՍՊԱՐԵ՛Ձ,  
 ՈՐ ՆՈ՛ՒՅՆՊԵՍ ՉԿԱՐ:  
 ԿԱՐ ՄԻԱՅՆ ՊԱՐԻ՛ՍՊ,  
 ՈՐ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԷՐ ԱՇԽԱՐՀԻՅ ԱՇԽԱՐՀ:  
 ԵՎ ԿԱՅԻՆ ՆԱԿ ԱԶՆԻՎ ՃԱԿԱՏՆԵՐ,  
 ՈՐՈՆՅՈՎ ԵՐԲԵՔ ՊԱՐԻՍՊ ՉԵ՛Ս  
 ՔԱՆԴԻ...

ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԻՇԽՈՒՄ ԷՐ ԱՐԴԵՆ ՄԻ  
 ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ,  
 ՈՐ ՀԱՐՅՈ՛ՒՐ ՏԱՐԻ,  
 ՀԱՐՅՈՒՐ ԶԻ՛Գ ՏԱՐԻ  
 ՉԷՐ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԻՐ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ  
 ԿԱՐԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼ.  
 ՄԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈ՛ՒՆ,  
 ՈՐ ԱՄԵՆ ՎԱՅՐԿՅԱՆ  
 ԿԱՄԱ-ԱԿԱՄԱ ՀԵՐՔՈՒՄ ԷՐ ԻՐԵՆ՝  
 ԱՆՎԵՐՋ ԲԱՅԵԼՈՎ ԻՐ ՄԵՐԿՈՒԹՅՈՒՆԸ  
 ԵՎ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԻՄԿ ԻՍԿՈՒԹՅՈ՛ՒՆԸ...  
 ՀԻՍՈՒՍԸ,  
 ՈՐ ՄԻ ՀՐԵԱ ԷՐ ԱԶՆԻՎ,  
 ԱՐԴԵՆ ՇԱ՛Տ ՎԱՂՈՒՅ ԴԱՐՁԵԼ ԷՐ ԻՐՈՔ  
 ՄԻ ԲՅՈՒԶԱՆԴԱՅԻ ԽՈՐԱՄԱՆԿ ՈՒ

ՆԵՆԳ.

Ե՛Վ ՆՈՐ ՀԱՎԱՏԻ ԵՂԵՄ-ԴՐԱԽՏԻ  
 ՊԱՃՈՒՃԱՆՔԻ ՏԱԿ  
 ՀԻՆ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆԸ ՆՈՐ ՀՆԱՐՆԵՐՈՎ  
 ԻՐ ՕՏԱՐԱԿՈՒԼ ԴԺՈՒՔՆ ԷՐ ՏԱՆՈՒՄ  
 ՈՒՐԻՇ ԵՐԿԸՐՆԵՐ,  
 ԻՐ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԱԿԱՆՆ ԷՐ ԶԱՐԿՈՒՄ  
 ԱՇԽԱՐՀԻ ՄԵԶՔԻՆ,  
 Ա՛ՅՆ ԽԵՂՃ ԱՇԽԱՐՀԻ,  
 ՈՐ ԶԱՐԿԻ ՑԱՎԻՑ ՆՈՒՅՆԻՄԿ ՏՆՔԱԼՈՒ  
 ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՐ,  
 Ե՛Վ ՏՆՔՈՅԻ ՏԵՂ  
 ԴԵՌ «ԱԼԵԼՈՒՒՄ» ՊԻՏԻ ՈՐՈՏԱՐ:  
 ԻՍԿ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ...  
 ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ  
 ԱԶՆԻՎ ՔԱՐՈՉՈՎ  
 ՈՒՐԻՇԻ ՏՈՒՆ ՈՒ ԵՐԿԻՐ ԷՐ ՄՏՆՈՒՄ  
 ՕՏԱՐ ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔ,  
 ՕՏԱՐ ԾԵՍ ՈՒ ԿԱՐԳ:  
 ԻՍԿ ԻՍԿՈՒԹՅՈՒՆ ՉԷ՞,  
 ՈՐ ԶՈՐՔԻՑ ՀԵՏՈ  
 ՄԻՇՏ ԷԼ ԼԵԶՈՒՆ ԵՆ ՄԱՐՏԱԴԱՇՏ  
 ՀԱՆՈՒՄ,  
 Ե՛Վ ԻՆՉ ՉԻ ԿԱՐՈՂ Ո՛Չ ՄԻ ԶՈՐՔ ԱՆԵԼ՝  
 ԼԵԶՈՒՆ Է ԱՆՈՒՄ:  
 ԻՍԿ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ...  
 ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԸ ԷԼ ԳԱՂԱՓԱՐ ՉԷՐ,  
 ԱՅԼ ՄԻ ԿԱՂԱՊԱՐ,  
 ՄԻ ՆԵ՛Ղ ԿԱՂԱՊԱՐ,  
 ՈՐ ԱՐԴԵՆ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԷՐ ՏԵՆՈՒՄ.  
 Ո՛Չ ԹԵ ԳԱՂԱՓԱՐ,  
 ԱՅԼ ՄԻ ԿԱՂԱՊԱՐ,  
 ՈՐ ԵՐԱԶՆ ԱՆԳԱՄ ԻՐ ՄԵԶ ԷՐ ԶԵՆՈՒՄ.  
 Ո՛Չ ԹԵ ԳԱՂԱՓԱՐ,  
 ԱՅԼ ՄԻ ԿԱՂԱՊԱՐ՝  
 Ե՛Վ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ,  
 ՈՐ ՇՆՉԱԿՏՈՒՐ ՀԵՆՈՒՄ ԷՐ, ՀԵՆՈՒՄ,  
 Ե՛Վ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ,  
 ՈՐ ՎԱՂՈՒՑ ԱՐԴԵՆ ԱԶԱՏ ՉԷՐ ԹԵՆՈՒՄ,  
 Ե՛Վ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՐ...



ԳԵԹ ԼԵԶՈՒՆ ԳՈՐԾԵՐ:  
 ՄԻՆՉԴԵՌ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ...  
 ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱՐ ԵՐԳԵԼ ԵՐԳԸ ՄԵՐ,  
 ՈՐ ԴԱՐԵՐ Ի ՎԵՐ  
 ՀՆՉԵԼ ԷՐ ԼԵԶՎՈՎ ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿ.  
 Ե՛Վ ՄԵՆ ՈՒ ՄԵՆԻԿ՝  
 ՄԻՐՈ ԽՈՍՔԵՐՈՎ,  
 Ե՛Վ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՏԱԿԱՐՆԵՐԻ ՄԵԶ՝  
 ԳԻՆՈՒ ՀՈՍՔԵՐՈՎ,  
 Ե՛Վ ՄԵՐ ՅՈՒՆՕՐՅԱ ՀԱՐՄԱՆԻՔՆԵՐԻՆ՝  
 ՄԵՐ ՓԱԿ ԲԱԿԵՐՈՒՄ,  
 ԲԱՅ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ:  
 ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱՐ ՆԱՆ ՆՎԱԳԵԼ՝  
 Ո՛Չ ՎԻՆԻ ՎՐԱ,  
 Ո՛Չ ԷԼ ԲԱՄՔԻՌԻ:  
 ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀՈԳԱՅԻՐ՝  
 ՊԻՂԾ ԵՍ,  
 Ե՛Վ ԱՆՕՐԵՆ ԵՍ,  
 Ե՛Վ ԲԱՆԱԴՐՎԱԾ:  
 «ԱՄԵ՛Ն ԻՆՉ ԱՐԱ ՀԱՆՈՒՆ Ա՛ՅՆ  
 ԿՅԱՆՔԻ,  
 ՈՐ ՔԵԶՆԻՑ ՀԵՏՈ, ՀԵՏՈ Է ԳԱԼՈՒ»...  
 ԹԱՏՐՈ՛Ն ԵՍ ԳՆՈՒՄ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ,  
 ԿԵՐ ՈՒ ԽՈ՞ՒՄ ԱՆՈՒՄ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:  
 ՊԱՐԻ՞ ՆԱՅԵՑԻՐ  
 Ե՛Վ ԿԱՄ ՊԱՐԵՑԻՐ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:  
 ՄԻՐԱՍԹԱՓ ԵՂԱՐ,  
 ՆՈՐ ՄԵ՛Ր ԱՐԵՑԻՐ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:  
 ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԵԹ ՄԻ՞ՏՔ  
 ԱՐԵՑԻՐ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:



«ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐԱ ԱՅՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ,  
 ՈՐ ՔԵԶՆԻՑ ՀԵՏՈ, ՀԵՏՈ Է ԳԱԼՈՒ»...  
 ԵՎ ԱՅՍ ԱՄԵՆԻՅ, ԱՅՍՔԱՆԻՅ ՀԵՏՈ  
 ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱՐ ՄԻՆՉԻՒՄԿ ԼԱԼՈՒ:  
 ՈՐԴՈ՞ՒՂ ԵՍ ՍԳՈՒՄ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:  
 ՈՂՔՈՒՄ ՍԵ Օ՞ՐԸՂ՝  
 ՈՒՐԵՄԸՆ ՊԻՂԾ ԵՍ:  
 ԻՐԵՆՑ ԻՍԿ ՏՎԱԾ ՑԱՎԻՅՑ ԵՍ ԼԱԼԻՄ՝  
 ԱՆՕՐԵՆ ԵՍ ԴՈՒ,  
 ԱՐԺԱՆԻ ՄԱՀՎԱՆ:  
 ԴԱՎԱՆԱՆՔ ԿՈՉՎԱԾ ԴԱՎԻՅՑ ԵՍ ԼԱԼԻՄ՝  
 ԱՆՕՐԵՆ ԵՍ ԴՈՒ,  
 ԱՐԺԱՆԻ ՄԱՀՎԱՆ:  
 «ՄՏԱԾԻՐ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ,  
 ՈՐ ՔԵԶՆԻՑ ՀԵՏՈ, ՀԵՏՈ Է ԳԱԼՈՒ»...  
 ...ԵՎ ԱՅՍ ԱՄԵՆԻՅ, ԱՅՍՔԱՆԻՅ ՀԵՏՈ՝  
 ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱՐ ՄԻՆՉԻՒՄԿ... ԼԱԼՈՒ:

ԻՐԱՎՈՒՆՔ ՉԿԱՐ  
 ԱՐՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ ԳԵԹ ԱՐՅՈՒՆՔ ՈԹԵԼ:  
 ԵՎ ԻՆՉ ԷՐ ՄՆՈՒՄ:  
 ԱՅԼ ԲԱՆ ՉԷՐ ՄՆՈՒՄ,  
 ՔԱՆ ԹԵ ԱՂՈԹԵԼ:  
 ԱՂՈԹԵԼ ԼՐԱՆ՝  
 ԱՅՆ ԼՈՐ ԱՍՏԸՈՒՆ,  
 ՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ ԱՉՔ ԻՍԿ ՉԷՐ  
 ԲԱՅՈՒՄ,  
 ԲԱՅՑ ՈՂՋԸ՝ ԱՅՆՏԵՂ,  
 ԲԱՅՑ ՈՂՋԸ՝ ՀԵՏՈ՛,  
 ԵՎ ՈՉԻՆՉ՝ ՀԻՄԱ,  
 ԵՎ ՈՉԻՆՉ՝ ՑԱԾՈՒՄ:  
 ԱՅԼ ԲԱՆ ՉԷՐ ՄՆՈՒՄ,  
 ՔԱՆ ԹԵ ԱՂՈԹԵԼ:  
 ԲԱՅՑ ԼՐԱՆՔ ԼՈՒՅԼԻՍԿ ԻՐԵՆՑ  
 ԱՍՏԸՈՒՆ  
 ԱՂՈԹՈՒՄ ԷԻՆ... ՕՏԱՐ ԽՈՍՔԵՐՈՎ,  
 ԽՈՍՔԵՐ՝ ՈՉ ՊԱԿԱՍ ԱՆՀԱՄԿԱՆԱԼԻ,  
 ՔԱՆ ԻՆՔՆ ԱՅՂ ԱՍՏՎԱԾ:  
 ...ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳՆԱԾ ՄՐՏԵՐԻ ՎՐԱ,



ՈՐ ԵՐԵՎ ԱՅՆՊԵ՛Ս ՀՈՒԶԱՌԱՏ ԷԻՆ,  
 ԱՅՆՊԵ՛Ս ԶԳԱՅԻԿ,  
 ԻԶԵԼ ԷՐ ԱՐԴԵՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՄԻ  
 ԿՈՐԾԱՆԱՐԱՐ  
 Ե՛Վ ՎԱՂՎԱ ՀԱՆԴԵՊ,  
 Ե՛Վ ԱՊԱԳԱՅԻ:  
 ՈՉ ՈՔ ՉԳԻՏԵՐ՝ ՎԱՂՆ ԻՆՉ ԿԲԵՐԻ:  
 ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱՇԽԻՔ ՉԿԱ՛Ր:  
 ԲԵՐՔ ՉԷՆ ՏԱԼԻՍ ԱՐՏԵՐԸ ԲԵՐԸԻ:  
 ԼՈՒՅԼԻՍԿ ԽՈՍՏԱՑՅԱԼ ԵՐԿԻՆՔԸ ՎԵՐԻՆ  
 ԴԱՐՁԵԼ ԷՐ ՄԻ ԿԵՂԾ-ԱՆԿԵՆԴԱՆ ԼԿԱՐ:  
 ԱՆԴԸՆԴԱՆՈՒՄ ԷՐ ՄԻ  
 ԱՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ,  
 ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ ՄԻ ԱՄԵՆԱՔԱՄ,  
 ՈՐ ՎԱՏ Է ԱՆԳԱՄ ՈՐՈՇՅԱԼ ՄԱՀԻՑ:  
 ՄԻ ԱՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԻՆՔՆ ԷՐ  
 ԴԱՐՁԵԼ  
 ԵՐԿՐԻ ԻՐԱԿԱՆ ՏԻՐԱԿԱԼԸ ՉԱՐ:  
 ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄԻ ՍՈՒՐ ՀՈՏ ԷՐ ՓՉՈՒՄ  
 Ո՛Չ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՑ, ԶՐԻՑ ՈՒ ՀՈՂԻՑ,  
 ԱՅԼ ԼԱԵ ՕԴԻՅ ՈՒ ՔԱՄՈ՛ՒՑ ԱՆԳԱՄ:  
 ՊԵՏՔ ԷՐ, ՇԱ՛Տ ԷՐ ՊԵՏՔ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ  
 ԱՆԵԼ,  
 ՄԱԿԱՅՆ ԻՆՉ ԱՆԵԼ Կ ԻՆՉՊԵ՛Ս,  
 ԻՆՉՊԵ՛Ս:  
 ՈՒ ԲՈԼՈՐՆ ԷԻՆ ԱՅՂ ՀԱՐՅԸ ՏԱԼԻՍ,  
 ԻՍԿ ՊԱՍԱՄԽԱՆՈՂ ՉԿԱ՛Ր ՈՒ ՉԿԱ՛Ր...  
 ԵՎ ԱՅՂ ՊԱՀԻՆ ԷՐ, ՈՐ ԱՇԽԱՐՀ ԵԿԱՎ  
 ԼԱ՛  
 \_\_\_\_\_ ԱՅՐ ՄԻ՛  
 \_\_\_\_\_ ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆՈՎ:  
 ՈՐՏԵՂԻՅՑ ԵԿԱՎ,

Ի՞նչ ԱԿԻՑ ԲԽԵՑ:  
 ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵԿԱՎ,  
 ՀՈՍԵՑ Ի՞ՆՉ ՀՈՒՆՈՎ:  
 ԱՅԴՊԵՍ՝ ԱՐՅՈՒՆՔ Է ԾՆՎՈՒՄ ԱՉՔԻ  
 ՄԵՋ,  
 ԵՐԲ ՈՐ ԱՉՔԻ ՄԵՋ ԸՆԿՆՈՒՄ Է ԱՎԱԶ:  
 ԱՅԴՊԵՍ՝ ԴԱՌՆՈՒՄ Է ԱՎԱԶՆ ԱՊԱԿԻ,  
 ԵՎ ԱՊԱԿԻՆ Է ՀԱՅԵԼԻ ԴԱՌՆՈՒՄ:  
 ԱՅԴՊԵՍ՝ ԱՐԿԸ ԱՍԵՆԻՑ ԱՌԱՋ  
 ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ Է ԲԱՐՁՐԱԲԵՐՁ ԾԱՌԻ  
 ԿԱՏԱՐԻՆ ԹԱՌԱԾ ԹՌՉՈՒՆԻ ԲՈՒՅՆԸ:  
 ԱՅԴՊԵՍ՝ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՀԵՂ  
 ՊԱՅՔԱՐՈՒՄ  
 ԱՆՓՈՓՈՒ ՊԱՀԱԾ ԻՐ ՆԵՐՔԻՆՆ ԷԼԻ՝  
 ԳԱԶԱՆՆ Է ՓՈՒՌՈՒՄ ԻՐ ՄԱՇԿԻ ԳՈՒՅՆԸ,  
 ԵՎ ԴԱ ԹՎՈՒՄ Է ԱՆՍՊԱՍԵԼԻ...  
 ՆՐԱՆՑ ԾՆՈՒՆԴԸ ՄԻՇՏ ԷԼ ԹՎՈՒՄ Է  
 ԱՆՍՊԱՍԵԼԻ  
 ԵՎ ՀԵՏՈ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ  
 ԶԱՐՄԱՆՔ ՊԱՏՃԱՌՈՒՄ,  
 ԲԱՅՑ ՆՐԱՆՔ ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻՇՏ ԷԼ  
 ԾՆՎՈՒՄ ԵՆ ԼՈԿ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ,  
 ՈՐ ԱՆՉԱՓ ՇԱՏ ԵՆ ՍՊԱՍԵԼ ՆՐԱՆՑ:  
 ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ ՆԵՋՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՔ,  
 ԻՆՉՊԵՍ ԶՐԻ ՄԵՋ՝ ԱՀԵՂ ԳՈԼՈՐՇԻՆ,  
 ԻՆՉՊԵՍ ԸՆՏԱՆԻ ԱՔԱՂԱՂԻ ՄԵՋ՝  
 ԻՐ ԻՍԿ ԵՐԲԵՄՆԻ ԹՌՉՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ,  
 ԻՆՉՊԵՍ ՄԱՆՈՒԿԻ ՊԱՐԱՊ ԲԵՐԱՆՈՒՄ՝  
 ԱԿՌԱ-ԱՏԱՍԸ:  
 ՆՐԱՆՔ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԾՆՈՂԻ  
 ԱՆՕԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ,  
 ՈՐՊԵՍԶԻ ԴԱՌՆԱՆ ՆՈՐ  
 ԶՈՐԵՂՈՒԹՅՈՒՆ:  
 ՆՐԱՆՔ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԻՆՉ-ՈՐ ՀԱՆՃԱՐԵՂ  
 ՄԻ ՀՈԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ,  
 ՈՐՊԵՍԶԻ ԴԱՌՆԱՆ  
 ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹՅՈՒՆ:  
 ՆՐԱՆՔ ԾՆՎՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՊԱՅՈՒՑԵՆ,  
 ԹԵ ՎԵՐՋԸ ՄԻ ՏԵՂ ԴԱՌՆՈՒՄ Է ՍԿԻԶԲ:  
 ՆՐԱՆՔ ԾՆՎՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՊԱՅՈՒՑԵՆ,  
 ԹԵ ՀՐԱՇՔ ԶԿԱ՛,  
 ԿԱ ՄԻԱՅՆ ԿԱՐԻ՛Ք:  
 ՆՐԱՆՔ ԾՆՎՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՊԱՅՈՒՑԵՆ,  
 ԹԵ ԱՅՆՏԵՂ Է ԼՈԿ ՍԽՐԱՆՔՆ ՍԿՍՎՈՒՄ,



ՈՒՐ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է ԱՍԵ Ն ՄԻ ՀՆԱՐ...  
 ԱՅՍՊԵՍ ԷԼ ԾՆՎԵՑ ՄԵԿԸ ՆՐԱՆՑԻՑ,  
 ԾՆՎԵՑ ՆԱ՝  
 \_\_\_\_\_ ԱՅՐ ՄԻ՝  
 \_\_\_\_\_ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆՈՎ:  
 ԵՎ ՆԱ ՉԾՆՎԵՑ, ՈՐ ԱՎԵԼԱՑՆԻ  
 ՀԱՐՑ ՏՎՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԱՆՊԱԿԱՍ:  
 ՆԱ ԵԿԱՎ ԱՇԽԱՐՀ՝ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ,  
 ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳՏԱՎ ԻՍԿԱՊԵՍ...  
 ...ՔԱԶԵՐԻ ՄԱՀՄԱՆՆ ԻՐԵՆՑ ԶԵՆՔՆ Է  
 ՀԵՆՑ:  
 ՔԱԶԵՐ ՄԻ՛ՇՏ ԷԼ ԿԱՆ,  
 ԶԵ՛ՆՔ Է ՀԱՐԿԱՎՈՐ:  
 ՔԱԶԵՐ ՄԻ՛ՇՏ ԷԼ ԿԱՆ,  
 ՊԵՏՔ Է ԱՍՊԱՐԵ՛Ձ:  
 ԵՎ ՆԱ ԷՐ ԱՀԱ, ՈՐ ՁԵԱՎՈՐԵՑ  
 ՄԻ ԶԵՆՔ ԺԱՆԳԱԽՈՒՅՍ,  
 ԵՎ ԾՈՎԱՎՈՐԵՑ  
 ԱՍՊԱՐԵՋ ՄԻ ՆՈՐ,  
 ՈՒՐ ԹՈՒՅԼ-ՈՒԺԵՂԻ,  
 ՇԱՏ ՈՒ ՄԱԿԱՎԻ,  
 ՔԻՉ ՈՒ ԲԱԶՈՒՄԻ  
 ՄՐՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՍՊԱՐԵՋ ԶԿԱ՛,  
 ՔԱՆԶԻ ՆՈՐԱՏԻՊ ԱՅԴ ՄԱՔԱՌՄԱՆ ՄԵՋ  
 ԱՅՐՈՒՁԻՒ ՏԵՂ ՄՏՔԵՐՆ ԵՆ ԿՌՎՈՒՄ,  
 ԹԱՆԱՔ Է ՀԵՂՎՈՒՄ ԱՐՅԱՆ ՓՈՒԱՐԵՆ,  
 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿՈՉՎՈՒՄ Է ՄԱՏՅԱՆ...  
 ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ, ԱՅՈ՛, ՆՐԱՆԻՑ ԱՌԱՋ:  
 ՄԱԿԱՅՆ ՆԱ ԾՆՎԵՑ,  
 ՈՐ ԳԱ ՈՒ ԴԱՌՆԱ ԻՆՉ-ՈՐ ՆՈՐ ՍԿԻԶԲ:  
 ...ՆՐԱՆԻՑ ԱՌԱՋ ԿԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ՝  
 ԵՐԿԸՆՔԻ, ՍԻՐՈ, ՊՏՂԱՎՈՐՈՒՄԻ,  
 ԻՆՉՊԵՍ ՓՈԹՈՐԿԻ, ՆԱԽ... ԴՊՐՈՒԹՅԱՆ:  
 ԵԹԵ ԲՈԼՈՐԸ՝ ՄԻՆՉԵՐՍԿ ՍՏՈՒՅԳ,  
 ՎԵՐՋԻՆԸՍ ՍՈՒՑ ԷՐ, ՍՈՒՑ ՍՏՈՒԳԱՊԵՍ.  
 -ԱՍՏՎԱԾ ԿԱՐ, ՄԱԿԱՅՆ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ  
 ԶԿԱ՛Ր:  
 ՆԱ՝ ՀԱՎԱՏԱՎՈՐՆ ԻՐ ՆՈՐ ՀԱՎԱՏԻ,  
 ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՍՈՒՑ ԱՍՏՈՒՆ  
 ՎԸՌՆԴԵՑ  
 ԵՎ ԻՆՔԸ ՄՆԱՅ ՆՐԱ ՓՈՒՄԱՆԱԿ:

ԲԱՅՑ ՄԻՆՉ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԻՆ ԱՍՏՎԱԾԸ  
ՄԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿ ՄԻԱՅՆ ՄԻ ԳՈՐԾ ԷՐ ԱՆՈՒՄ՝  
ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԻՆ ԷՐ ԱՌՆՈՒՄ ՈՒ  
ՏԱՆՈՒՄ,

ՍԱ ԵԿԱՎ, ՈՐ ՄԵՁ ՀՈԳԻ՝ ՊԱՐԳԵԻ...  
ԱՅՈ՛, ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆՐԱՆԻՑ ԱՌԱՋ.  
ՀՁՈՐ ԹԵ ՏԿԱՐ՝

ՄԱՐՄԻՆ ԷԻՆՔ ՄԵՆՔ:  
ՍԱԿԱՅՆ ՆԱ ԵԿԱՎ, ՈՐ ՀՈԳԻ՝ ԴԱՌՆԱ,  
ՇՈՇԱՓՎՈ՛Ղ ՀՈԳԻ,  
ԵՎ ԱՆՄԵ՛Ռ ՀՈԳԻ:

ԱՅՈ՛, ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ ՆՐԱՆԻՑ ԱՌԱՋ.  
ՔԻՉ ԹԵ ՇԱՏ՝ ԿԱՐ ՀԱՅ,  
ԵՎ ՈՒՆԵԻՆՔ ՋՈՒՐ:

ՍԱԿԱՅՆ ՆԱ ԾՆՎԵՑ, ՈՐ ՄՆՈ՛ՒՆԴ  
ԴԱՌՆԱ:

ԾՆՎԵ՛Ց, ՈՐ ԾՆԵ՛ՆՔ,  
ԵՂԱ՛Վ, ՈՐ ԼԻՆԵ՛ՆՔ,  
ԵՎ ԱՆՄԱՀԱՅԱ՛Վ,  
ՈՐ ԱՆՄԱՀԱՆԱ՛ՆՔ...

ԿԻՍՎԱԾ ԷՐ ԱՐԴԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՐ,  
ԵՎ ՀԵՏՈ ՊԻՏԻ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՄՆԱՐ.  
ԴԱՐԵՐՈՎ ՀԵՂՎԱԾ ՄԵՐ ԱՐՅՈՒՆԸ  
ՍՈՒՐՔ

ՊԻՏԻ ԱՊԱՐԴՅՈՒՆ ԿՈՐՉԵՐ ՈՒ ԳՆԱՐ:  
ԴԵՌ ՊԻՏԻ ԳԱՅԻՆ ՕՐԵՐ ԱՀԱՎՈՐ.  
ՄԵՐ ՀՈՂԸ ՊԻՏԻ ՄԵՁ ԿԱՐՈՏԵԼՈՒՑ  
ՊԱՏՎԵՐ ԵՂԻՆՋՈՎ ՈՒ ՓՇՈՎ ԽԱՅԹԻՉ,  
ԻՍԿ ՄԵՐ ԵՐԿԻՆՔԸ՝  
ՄԵՐ ԱՉՔԻՑ ՋՐԿՎԱԾ,

ՊԻՏԻ ՈՐ ԻՆՔՆ ԷԼ ԻՐ ՋՈՒԳՄԻՑ ՋՐԿՎԵՐ:  
ՀԵՏՈ ՊԻՏԻ ՄԵՁ ԽԱԲԵԻՆ ԱՅՆՊԵ՛Ս,  
ՈՐ ՀԻՆ ԽԱԲԵԲԱՆ՝  
ՆՈՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՅԻՆ,  
ՋԱՐՄԱՆԱՐ ԻՆՔԸ:  
ՀԵՏՈ ՊԻՏԻ ՄԵՁ...

ՄԻՋԱՀԱՏՎԱԾ ԷՐ ՄԵՐ ՀՈՂԸ ԲՆԻԿ,  
ՃԵՂՔՎԱԾ ԷՐ ԱՐԴԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՐ:



ԵՎ ՆԱ ՉԾՆՎԵՑ ԻՆՉ-ՈՐ ՄԻ ՄՈՐԻՑ:  
ՆԱ ՀԵՆՑ ԱՅԴ ՃԵՂՔԻՑ ԾԱՌԱՅԱՎ  
ՀԱՆԿԱՐԾ,  
ՈՐ ՃԵՂՔԸ ԼՅՆԻ ԳԵԹ ԻՆՔՆ ԻՐԵՆՈՎ:  
ԵՎ ԱՅԴ ՃԵՂՔԸ ՆԱ ԼՅՐԵՑ ԻՍԿԱՊԵՍ.  
ՄԵՐ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ՀՈՂԵՐԸ ՆՈՐԻՑ  
ԱՅԴ ՆԱ ԷՐ ՄԻԱՅՆ, ՈՐ ԲԵՐԵՑ ԻՐԱՐ  
ՈՒ ՄԻԱՎՈՐԵՑ... ԱՐԴԵՆ ՄԵՐ ՄՏՔՈ՛ՒՄ:  
ԵՎ ԱՅԴ ՕՐԻՑ ՎԵՐ  
ՈՒ ՄԻՆՉԻ ԱՅՍՕՐ  
ԱՅԴ ՄԻԱՅՈՒՄԸ ՄՆՈՒՄ Է ԱՆԽԱԽՏ՝  
ԸՆԴԴԵՍ ՃՉԱՅՈՂ ԱՅՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ,  
ՈՐ ԲԱԽՏՆ Է ԱՆՈՒՄ ՍՈՒՍՈՒՓՈ՛ՒՄ  
ԱՅՆՊԵՍ,  
ԵՎ ԱՆՈՒՄ ԱՆՁԱՅՆ ՄԻ ՔՄԾԻԾԱՂՈՎ,  
ՈՐԻ ՏԱԿ ՊԻՏԻ ԱՍՈԹՆ ԻՐ ԾԱԾԿԻ,  
ԲԱՅՑ ԻՉՈ՛ՒՐ.  
ԾԱԾԿԵԼ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ,  
ԻՆՉՊԵՍ ՉԻ ԾԱԾԿՈՒՄ ԾԱԾԿՈՒՅԹԸ  
ԽՈՏԻ  
ՃԱՀՃԻ ԳՈԼՈՐՇԻՆ՝ ՔՐՏԻՆՔՆ ԱՍՈԹԻ...  
ՉՈՒՆԵԻՆՔ ԱՐԴԵՆ ՊԵՏ ՈՒ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ,  
ԾԱՂԱՆԿԱՐ ԷՐ ԵՂԱԾԸ ԱՐԴԵՆ՝  
ԳԾՎԱԾ ՁԵՌՔԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՆԿԱՐՉԻ,  
ՈՐ ԱՏՈՒՄ ԷԻՆ ԻՐԱՐ ՈՉ ՊԱԿԱՍ,  
ՔԱՆ ԹԵ ՄԵՆՔ ԻՐԵՆՑ:  
ՀԵՏՈ ՄԵՆՔ ՊԻՏԻ ԳԱՂՈՒԹ ԴԱՌՆԱՅԻՆՔ՝  
ԳԱՂՈՒԹԻ ՄԱՐՉՊԱՆ-ԿԱՌԱՎԱՐԻՉՈՎ:  
ՀԵՏՈ ՄԵՁ ՊԻՏԻ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ  
ՏԱՆԵԻՆ ԱՆՎԵՐՋ ԱՆԿՈՒՄԻՑ ԱՆԿՈՒՄ,  
ՄԵՐ ՄԵՋՔԻ ՎՐԱ ԵՐԿԱՆՔ ԱՂԱՅԻՆ



ԵՎ ՍՏԻՊԵԻՆ, ՈՐ ԺՊՏԱՆՔ ԿԱՆ:  
ՀԵՏՈ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՄԵՐ ՇԵՆԻՅ ՁՐԿՎԱԾ՝  
ՔԱՂԱՔ ՇԻՆԵԻՆՔ ԱՎԵՐՆ ՈՒՐԻՇԻ:  
ՀԵՏՈ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՄԵՐ ՀԵՐԿԻՅ ՁՐԿՎԱԾ՝  
ՀԵՐԿԵԻՆՔ ՕՏԱՐ ԿՈՐԴ ՈՒ ԱՌԱՊԱՐ:  
ՀԵՏՈ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՄԵՐ ՈՏՆԱՀԵՏՔԻ  
ԴՐՈՇՄԸ ԴԱՐՁՐԱԾ ՅՈՒՐՈՎԻ ԴՐՈՇ՝  
ՄԽԵԻՆՔ ԲՈԼՈՐ ԼԱՅՆՔԵՐԻ ՎՐԱ  
ԵՐԿԻՐ ԿՈՉԵՅՅԱԼ ԱՅՆ ԿԼՈՐ ԳԼԴԻ,  
ՈՐՏԵՂ ՊԻՏԻ ՈՐ ԱՄԵՆ ՃԱՆԱՊԱՐՀ  
ՎԵՐՍՏԻՆ ԲԵՐԻ ԻՐ ՏԵՂԸ ԿԱՄԿԻՆ,  
ԲԱՅՅ ՄԵԶ... ՀԱՅՐԵՆԻՔ ՉԲԵՐԵ՛Յ ԵՐԲԵՔ...  
ՉՈՒՆԵԻՆՔ ԱՐԴԵՆ ՊԵՏ ՈՒ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

ՀԱՅՐԵՆՅԱՅ ԳԱՀԸ ՓԼՎԱԾՔ ԷՐ ՏՎԵԼ:  
ԵՎ ԿԱ ՉԾՆՎԵՅ ԻՆՉ-ՈՐ ՄԻ ՄՈՐԻՅ.  
ԿԱ ԱՅԴ ՓԼՎԱԾՔԻՅ ԲՈՒՄՆԵՅ  
ՄԽՐԱՆՔՈՎ,  
ՈՐ ԱՅԴ ՓԼՎԱԾՔԸ ՈՂՁԱՆԱ ԿՈՐԻՅ:  
ԵՎ ԱՅԴ ՓԼՎԱԾՔԸ ԻՐՈՔ ՈՂՁԱՅԱՎ:  
ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ԱՆԵԼ ՉԿԱՐՈՂԱՅԱՆ  
ԱՐՇԱԿ-ՎԱՂԱՐՇԱԿ,  
ՄՈՒՇԵՂ ՈՒ ՄՈՒՇԵ,  
ՄԱ՛ ԱՐԵՅ ՄԻԱՅՆ՝ ԱՆՁԵՆ ՈՒ ԱՆՁՈՐՔ.  
ՄԵԶԱՆԻՅ ԽԼՎԱԾ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂ  
ՍՏԵՂԾԵՅ ՄԻ ԿՈՐ՝  
ՉԵՂՅԱ՛Լ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ,  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԻ ՀԶՈՐԱԶՈՐ՝  
Ո՛Չ ԹԵ ՄԵԶԱՆԻՅ ԽԼՎԱԾ ՀՈՂԵՐԻ,  
ՄԵՐ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ՀԱՅՐԵՆՈՒ ՎՐԱ,  
ԱՅԼ ՄԵՐ ԱՆԲԱԺԱ՛Ն,  
ՄԵՐ ԱՆԿԻՄԵԼԻ՛,  
ԵՐԲԵ՛Ք ՉԽԼՎՈՂ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԵԶ:  
ԵՎ ԱՅՆՈՒՀԵՏԻ ԱՆՎԱԽՃԱՆ ԵՂԱՎ  
ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԿՐԱ ՏՈՒՆԸ ՄԵԾ,  
ԵՎ ՄԵՐ ՀՈԳԻՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԳԱՀԻՆ ԲԱՐՁՐԱՅՈՂ ԱՄԵ՛Ն ԹԱԳԱՎՈՐ  
ԾՆՎԵՅ ԿՈ՛ՒՅՆ ՏԻՅ,  
ԿՈ՛ՒՅՆ ՅԵՂԻՅ ՄԵՐԵՅ  
ԵՎ ՊԱՏՎՈՎ-ՓԱՌՔՈՎ-ՎԵՀՈՒԹՅԱՄԲ  
ԿՐԵՅ  
ԿՈ՛ՒՅՆ ՏՈՀՄԱՆՈՒՆԸ՝  
ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՅՅԱ՛ՆՔ...  
ԱՅՄՊԵ՛Ս ԾՆՎԵՅ ԿԱ:  
ԲԱԽՏԻ ՀԱԿԱՌԱ՛Կ,  
ԹԵ՞ ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ԿՐԱ ՁՂՁՈՒՄՈՎ,  
ԿԱ ԵԿԱՎ, ՈՐ ՄԵԶ ՎԵՐԱԴԱՐՁԸՆԻ  
ԱՅՆ, ԻՆՉ ԽԼԵԼ ԷՐ ԿՈՒՅՆ ԲԱԽՏԸ ԵՐԵԿ:  
ԱՌԱՆՅ ՀԱՎԱՏԻ ՀԵՇՏ ՉԷ ՄԵՌՆԵԼԸ,  
ԻՍԿ ԱՊՐԵԼԿ... ԱՐԴԵՆ ԱՆՏԱՆԵԼԻ Է:

ԵՎ ՄԵՐ ԿՈՐԾԱՆՎԱԾ ՀԻՆ ՀԱՎԱՏԻ ՏԵՂ  
ՄԵԶ ԿՈ՛Ր ՀԱՎԱՏՈՎ ՁԻՆԵՅ ՎԵՐՍՏԻՆ:  
ԷՃԱՆ-ԾԱԽՈՒԻ, ԱՆՅԵՆՈՂ-ՎԱՏԻ ՏԵՂ  
ԲԵՐԵՅ ՉՔԵՐՎՈՂ-ԱՆՁԻՆՁ-ՀԱՎԱՍՏԻՆ:  
ՍՈՒՏ ՈՒ ԿԵՂԾԻՔԻ ԾԾԱԿԻ ՏԵՂԱԿ  
ՄԵՐ ՄԱՆԿԱՆՅ ՏՎԵՅ ԱՆՅԱՄԱՔ ՍՏԻՆՔ,  
ՈՐՈՎ Կ ԿՐԱՆՔ ԿՐԿԼԱՄԱՅՐ ԵՂԱՆ.  
ՈՎ ՕՐՈՎ՝  
ԿՐԱՆՔ ՄԵԾԱՅԱՆ ՏԱՐՈՎ,  
ՈՎ ՏԱՐՈՎ՝  
ԿՐԱՆՔ ՄԵԾԱՅԱՆ ԴԱՐՈՎ,-  
ԵՎ ԲԻՐՏՈՒԹՅԱՆ ՏԵՂ ՓՈՎՎԵՅ  
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՐԱՊԸ ԼՅՎԵՅ,  
ՈՒ ՄԵԿ ՕՐ ԱՆԳԱՄ ՉՈՐԵՔԹԱԹ ՉԱՐԱԾ՝  
ՄԻ ԱՐԱԳՈՏԸՆ ԿԱՅՏԱՌ ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆ  
ԸՆԴՈՍՆԵՅ ՄԵԿԵՆ ՈՒ ՎԱԶՔԻ ԼԾՎԵՅ:  
ՄԵՐ ՓԼԱՏԱԿՎԱԾ-ՓԼՈՒԶՎԱԾԻ ՏԵՂ  
ԿԱ ԿՈ՛ՐԸ ԿԵՐՏԵՅ, ԿՈ՛ՐԸ ԿԱՌՈՒՅԵՅ.  
ԿԱՎԱԲԵԿՎԱԾԻ ՈՒ ՍՈՒԶՎԱԾԻ ՏԵՂ  
ԱՆՏԱԿ ՀԱՏԱԿԻՅ ԿՈ՛ՐԸ ՀԱՐՈՒՅԵՅ.  
ԱՐԳԵԼՎԱԾ ԵՐԳԻ ԶՎԱՐԹ ԳՈՒՅՆԻ ՏԵՂ  
ԽՈՐՈՒՆԿԻ ՎՐԱ ՏՐՏՈՒՄԸ ՀԻՆԵՅ.  
ԱՆՄԻՏ ՄԻՏՈՒՄՈՎ ՔԱՆԴՎԱԾ ԲՈՒՅՆԻ  
ՏԵՂ  
ՀՈԳԵԲՆԱԿՄԱՆ ՄԵՐ ՏՈՒՆԸ ՇԻՆԵՅ.  
ՕՏԱՐԻ ԶԵՆԻ ՈՒ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ԿՈ՛Ր ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ-ԿՈՐՈՒԹՅԱ՛ՄԲ  
ԶԻՆԵՅ՝  
ԶԵՆՔՈՎ ՄԻ ԿՈՐՈԳ Կ ՍՔԱՆՉԵԼԻ,  
ՈՐԻ ԴԵՍ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅԻՆ ԱՆՁՈՐ  
ԿԵՏ ՈՒ ՅԱԹԱՂԱՆ,  
ՓՂԵՐ ՈՒ ՏԱՆԿԵՐ,  
ԵՎ ՈՐ ՄԵՐ ՈԳՈՒ ԱՆԲԱՌ ԿԱՆՉԵՐԻՆ  
ՊԻՏԻ ՈՐՈՏՈՎ ՄԻՇՏ ԱՐՁԱԳԱՆՔԵՐ:  
ԴԱ ԶԵ՛ՆՔ ԷՐ ԱՐԴՅՈՔ,  
ԹԵ՞ ԼՈՒՅՍ ԷՐ, ՄԻ ԼՈ՛ՒՅՍ,  
ՈՐ ՕՏԱՐ ՀՈՂՄԻՅ ԵՐԲԵՔ ՉՀԱՆԳԱՎ,  
ԱՅԼ ՔԱՆԻ ԳԼԱՐ՝ ՊԻՏԻ ՈՐ ՀԱՆԳԵՐ  
ԱՆԾՈՒԽ-ԶՏԱԲՈՅ ԱՆՇԵՁ ԿՐԱԿԻ  
ԵՎ ՏԱՌԱՊԱԼԻՅ ՄԵՐ ՕՐԵՐԻ ՄԵԶ  
ԼԻՆԵՐ ԿԵՆԱՐԱՐ ԶՎԱՐԹ ԿԻՐԱԿԻ:  
ՄԵԶ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳԻ ՉԱՓ ՄԵԾ  
ԵՎ ԱՅԴ ՎՏԱՆԳԻՅ ԿԱՆ ԱՀԱԳԻՆ՝  
ԿԱ ՕՏԱՐ ՀՐԻ ՃԱՐԱԿԻ ԴԻՄԱՅ  
ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՓԵՅ ՈՒ ԿՈՒԵՅ.  
ՕՏԱՐ ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐԱԿԻ ԴԻՄԱՅ  
ՄԱՀ ՀԱՄՏԵՍ ԱՐԱԾ ՄԵՐ ԱՄԵՆԻՄԱՅ  
ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՄԻ ՊԵՍ ԴՐԵՅ.  
ԴՐԵՅ ԽԱՐԴԱԽՎԱԾ ԿԱԹԻ ԴԵՍ՝ ՄԵՐԱՆ,

ՔԱՆԱԿԻ ԴԵՄ՝ ԹԵ,  
ԹՎԻ ԴԵՄ՝ ԹՈՒՉՔ,  
ԱՐՅԱՆ ԴԵՄ՝ ԹԱՆԱՔ,  
ՄՐԻ ԴԵՄ՝ ԳՐԻՉ,  
ԵՎ ԴԱՐԱՆԻ ԴԵՄ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ...  
ԵՎ ՄԵՆՔ՝ ՆՐԱՆՈՎ ՄԻՇՏ ՁԻՆԱՎԱՌՎԱԾ,  
ՄԻԱՍԻՆ ԵՂԱՆՔ՝ ՅԻՐ ՈՒ ՅԱՆ ԱՐՎԱԾ.  
ԱՆՎԵՐՁ ԿՐԵԼՈՎ ՁԱՐԿԵՐ ՈՒ ՀԱՐՎԱԾ,  
ՆՈՒՅՆԻՄԿ ՀԱՂԹՎԵԼՈՎ ՄԱՆՏ  
ԲԱՆԱԿՆԵՐԻՑ՝  
ՄԱՆՏԵՐԻՑ ՄԱՆՏԻՆ ՀԱՂԹԵՑԻՆՔ  
ԿՅԱՆՔՈՒՄ -  
ՀԱՂԹԵՑԻՆՔ ԴԱՄԱՆ ՄԱՍԱՆԱԿՆԵՐԻՆ.  
ԿԱՆԳՈՒՆ ԱՌ ԿԱՆԳՈՒՆ ԹԱՂՎԵԼՈՎ  
ՀՈՂՈՒՄ՝  
ՀԱՌՆԵՑԻՆՔ ԴԱՐՉՅԱԼ, ՄՆԱՅԻՆՔ  
ԿԱՆԳՈՒՆ.  
ԱՆՎԵՐՁ ԸՆԿՆԵԼՈՎ՝ ՎԵՐԱԹԽԵՑԻՆՔ.  
ՄԵՌՆԵԼՈՎ ԱՆՎԵՐՁ՝ ԳՈՅԱՏԽԵՑԻՆՔ...  
ԵՎ ՀԻՄԱ ԱՐԴԵՆ ԱՅԴ ՄԵ՛Ձ ՉԵՆ  
ՊԵՂՈՒՄ.  
ԱՅԼ ՄԵՆՔ ԵՆՔ ՊԵՂՈՒՄ.  
ԱՅԴ ՄԵ՛Ձ ՉԵՆ ՀԻՇՈՒՄ,  
ԱՅԼ ՄԵՆՔ ԵՆՔ ՀԻՇՈՒՄ.  
ՄԵ՛Ձ ՉԵՆ ՎԿԱՅՈՒՄ, ՄԵՆՔ ԵՆՔ  
ՎԿԱՅՈՒՄ՝  
ՀԱՍՆԵԼՈՎ ՈՒՐԻՇ ՄԱՍԱՆԱԿՆԵՐԻ,  
ԵՐԲ ՄԵՆՔ՝ ՏԱՌԱՊԱԾ ՄԻՇՏ  
ՔԱՆԱԿՆԵՐԻՑ,  
ՀՊԱՐՏ ԵՆՔ ԱՐԴԵՆ ՄԵՐ ՆՈՐ ՈՐԱԿՈՎ.  
ՄԵՆՔ՝ ԲՈՆԱԴԱՏՎԱԾ  
ԱՐԲԱՆՅԱԿՈՒԹՅԱՆ,  
ՀՊԱՐՏ ԵՆՔ ՀԻՄԱ ԱՅՆ ԱՐԲԱՆՅԱԿՈՎ,  
ՈՐԻ ԾԻՐԻ ՄԵՁ ԿԱ ԿՎԱԶՔԸ ՄԵՐ.  
ԵՎ ՀՊԱՐՏ՝ ՆԱԽ ՀՐԹԻՌՈՎ ԱՅՆ ՆՈՐ,  
ՈՐԻ ԹԻՌԻ ՄԵՁ ԿԱ ՀՐԱՇՔԸ ՄԵՐ...  
ԱՅՍՊԵ՛Ս ԱՊՐԵՑԻՆՔ  
ԵՎ ԱՅՍՏԵ՛Ղ ՀԱՍԱՆՔ:  
ԱՅՍՊԵ՛Ս ՇԻԹՎԵԼՈՎ՝  
ԴԱՐՉԱՆՔ ԳՈՌ ՀՈՍԱՆՔ:  
ՄԵՆՔ՝ ՀԻՆԸ ՀՆԻՑ,  
ՆՈՐԱՅԱ՛ՆՔ ՆՈՐԻՑ:  
ԵՎ ԱՅՍ ԱՄԵՆԸ՝  
ՆՐԱ՛ ՇՆՈՐՀԻՎ...  
ԱՅՍՔԱՆԻՑ ՀԵՏՈ Ի՛ՆՉ ԿՈՉԵՍ ՆՐԱՆ.  
ՄԵՐ ԿԵՌՄԱՆԱՇԱՏ ԵՐԹՈՒՂՈՒ ՎՐԱ  
ՄԻ ՆՇԱՆԱՅԻ՛Ց,  
ՄԻ ՍՅՈ՞ՒՆ,  
ԿԱՄ ԹԵ ՁՈ՞Ղ,  
ԻՆՉ-ՈՐ ԳՐԵՐԻ ԻՆՉ-ՈՐ ՍՏԵՂԾՈ՞Ղ:

ՈՒ ԵԹԵ ՊԻՏԻ ԳԻՐ ՈՒ ՏԱՌ ՀԻՇՎԻ,  
ԱՊԱ ՆԱ ԻՆՔՆ Է ԱՅՆ ՄԵԾՍԱՏԱՌԸ,  
ՈՐՈՎ ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ՊԱՐՉՈՒԿ ԲԱՌԸ  
ԱՃՈՒՄ Է-ՀԱՍՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ,  
ԵՎ... ՄԱՐԴԸ ՁԳՎՈՒՄ ՈՒ ԴԱՌՆՈՒՄ Է  
ՄԱՐԴ,  
ԱՆՅՈՂԻԿ ՄԱՐՏԸ՝ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԱՐՏ,  
ԽԵՂՃ ՏՔՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁՈՐԵՂ  
ՏՔՆՈՒԹՅՈՒՆ,  
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՈՒԺ՝ ՀՈՒԺԿՈՒ  
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ,  
ՊԱՇՏՈՂ՝ ՊԱՇՏՈՂ,  
ԻՄԿ ՀԱՅԸ՝... ՄԱՇՏՈՑ:  
ՄԱՇՏՈ՛Յ... ԱՅՄԻՆՔԸՆ՝ Ա՛ՅՐ ՄԻ, ՈՐ ԵԿԱՎ  
ԱՊԱՅՈՒՑԵԼՈՒ,  
ԹԵ ՄԻ ՏԵՂ ՎԵՐՁԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՍԿԻՁԲ:  
ԱՅՄԻՆՔԸՆ՝ Ա՛ՅՐ ՄԻ, ՈՐ ԱՊԱՅՈՒՑԵՑ,  
ԹԵ ՀՐԱՇՔ ՉԿԱ՛, ԱՅԼ ԿԱ ԼՈՎ ԿԱՐԻ՛Ք:  
ԱՅՄԻՆՔԸՆ՝ Ա՛ՅՐ ՄԻ, ՈՐ ԱՊԱՅՈՒՑԵՑ  
ԵՎ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱՊԱՅՈՒՑԵԼՈ՛Ւ,  
ՈՐ ԱՅՆՏԵՂ Է ԼՈՎ ՄԽՐԱՆՔՆ ՍԿՍՎՈՒՄ,  
ՈՒՐ ՎԵՐՁԱՆՈՒՄ Է ԱՄԵ՛Ն ՄԻ  
ՀՆԱՐ...